## ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանի ծննդյան 50-ամյակի առթիվ)

*Անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Ախալքալաքում, վաստակավոր ժուռնալիստ Ադասի Մելքոնյանի ընտանիքում, որտեղ փոքրուց մեծացել է Հայաստանի և Պատմական Հայրենիքի նկատմամբ սիրով ու կարոտով:*

*Ա. Մելքոնյանը 1977 թ. գերազանցությամբ ավարտել է տեղի Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 4 հայկական միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1982 թ. գերազանցության դիպլոմով ավարտելով բարձրագույն ուսումնառությունը՝ մինչև 1985 թ. եղել է նույն համալսարանի Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: 1989 թ. նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:*

*1986 թվականից աշխատանքի է անցել Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, նախ՝ որպես լաբորանտ, ապա՝ գիտաշխատող, գիտական քարտուղար և գիտական հարցերի գծով փոխտնօրեն, իսկ 2002 թ., պաշտպանելով դոկտորական ատենախոսությունը՝ «Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին» թեմայով, նույն թվականին ընտրվել է Պատմության ինստիտուտի տնօրեն: Երկու տարի անց՝ 2004 թ. ստացել է նաև պրոֆեսորի գիտական կոչում, իսկ 2006 թ.՝ ընտրվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:*

*Ա. Մելքոնյանը բազմաթիվ գրքերի և ավելի քան 150 գիտական հոդվածների հեղինակ է, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրանում, Արգենտինայում, Հունգարիայում և այլուր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն, պարսկերեն, իսպաներեն, թուրքերեն, հունգարերեն:*

*Հիշարժան է 1994 թ. լույս տեսած նրա «Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» («Հայաստան», ՀՀ ԳԱԱ հրատարակչություններ, Երևան, 1994) մենագրությունը, որտեղ հեղինակը, հայ և օտար սկզբնաղբյուրային նորահայտ հարուստ նյութ գիտական շրջանառության մեջ դնելով, ներկայացնում և*

*հանգամանալից ուսումնասիրում է 1801–1830 թթ. Արևմտյան Հայաստանի զգալի մաս կազմող Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչության վարչաէթնիկական պատկերը՝ վարչատարածքային բաժանումը, հայ ազգաբնակչության թվաքանակը և տեղաբաշխումն ըստ գավառների ու բնակավայրերի, հայկական բնակավայրերի տեղագրությունը, էթնոժողովրդագրական գործընթացներն ու տեղաշարժերը, դրանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրդապատճառները:*

*Իր այս աշխատությամբ Ա. Մելքոնյանը հայ պատմագիտության ասպարեզում միանգամայն նոր բնագավառի՝ Հայաստանի պատմաազգագրական շրջանների ժողովրդագրական հետազոտության սկիզբ է դրել, հույժ կարևորելով դրա հրատապությունն ու քաղաքական նշանակությունը, մանավանդ որ, ինչպես հեղինակն է նշում, «…վերջին երեք-չորս տասնամյակներում թուրքական պատմագրությունը հայ ժողովրդի պատմության մի շարք հանգուցային հարցեր համառորեն նենգափոխում է՝ կարևոր տեղ հատկացնելով ժողովրդագրական պրոբլեմներին, որոնք ևս, որպես կանոն, մեկնաբանում է ազգայնական և պանթուրքիստական դիրքերից» (էջ 3):*

*Սույն աշխատության տրամաբանական շարունակությունը կարելի է համարել Ա. Մելքոնյանի «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» («Զանգակ-97», Երևան, 2003) աշխատությունը, քանի որ ջավախքահայերի մեծ մասի նախնիները գաղթել էին Էրզրումի նահանգից 1829–1830 թթ.: Մենագրության մեջ հեղինակը Հյուսիսային Հայաստանի պատմաաշխարհագրական ընդհանուր հենքի վրա ուսումնասիրում է Ջավախքի քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-մշակութային պատմությունը հիշյալ ժամանակաշրջանում, մանավանդ նրա պատմության ամենաճակատագրական ժամանակահատվածի՝ 1918–1921 թթ., իրադարձությունները: Աշխատությունը համալրված է նաև արխիվային հարուստ փաստաթղթերով, որոնք շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:*

*Ա. Մելքոնյանի գրչին են պատկանում նաև՝ «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ)» («Մեսրոպ Աշճյան» մատենաշար, թիվ 8, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ. հրատ., Երևան, 2005) աշխատությունը, որտեղ հեղինակը եկեղեցու թեմական կառույցների ընդհանուր հենքի վրա ներկայացնում է հիշյալ երկու գավառների հոգևոր-կրթական կյանքը, 1828 թ. Ռուսաստանին միացումից հետո Սամցխե-Ջավախքում հայ քաղաքական ու հոգևոր-կրթական կյանքի աշխուժացման միտումները, երբ հարյուրավոր ծխական, մասնավոր ու պետական դպրոցներ են բացվել տարածաշրջանում: Աշխատությունը համալրված է արխիվային բազմաթիվ փաստաթղթերով, որոնք ավելի են հարստացնում հետազոտվող նյութը:*

*Ա. Մելքոնյանը նաև պրոֆ. Վ. Ղազախեցյանի հետ կազմել ու խմբագրել է «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)» («Գիտություն» հրատ., Երևան, 2008) ժողովածուն և «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (համահեղինակ պրոֆ. Է. Լ. Դանիելյան, «Զանգակ» հրատ., Երևան, 2008) հատորը:*

*Բեղուն գիտնական Ա. Մելքոնյանը բազմաթիվ զեկուցումներ է կարդացել միջազգային տարբեր գիտաժողովներում, ինչպես նաև դասախոսություններով ու ելույթներով հանդես եկել արտերկրում, հայաստանցի*

*հայագետի իր ծանրակշիռ խոսքը ներկայացնելով սփյուռքահայ և օտարազգի լսարաններին՝ Ուկրաինայում, Գերմանիայում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Թուրքիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Շվեդիայում, Իրանում, Իսպանիայում, Լիբանանում, Հունաստանում, Շվեյցարիայում, Հունգարիայում, Սիրիայում, Մեծ Բրիտանիայում, Կիպրոսում, Մոլդովայում, ինչպես նաև՝ Հայաստանում:*

*Պրոֆ. Ա. Մելքոնյանը գիտական աշխատանքին զուգահեռ վարում է նաև եռանդուն մանկավարժական գործունեություն: Նա Հայոց պատմություն է դասավանդում Երևանի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ մագիստրատուրայում: 2004–2006 թթ. զբաղեցրել է նաև Երևանի բժշկական համալսարանի Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը:*

*Ա. Մելքոնյանը գլխավորում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և նույն ինստիտուտում գործող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհուրդները, ԵՊՀ խորհրդի, պատմության ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդների և մի քանի գիտական հանդեսների («Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Կանթեղ» «Վեմ» և այլն) խմբագրակազմերի անդամ է:*

*Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է ութ թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են Հայաստանի պատմական ժողովրդագրության և ցեղասպանության թեմաներին: Խմբագրել է մի շարք գիտական աշխատություններ:*

*Արգասավոր է Ա. Մելքոնյանի գիտական ուղին և ընդգրկուն նրա հետազոտությունների աշխարհագրությունը. նա ոչ միայն մեր Պատմական Հայրենիքի պատմագիտական ուսումնասիրությանն է լծված, այլ նաև՝ հանրագիտարանային հոդվածների, դպրոցական և բուհական դասագրքերի միջոցով այն հանրամատչելի ներկայացնում է ընթերցող լայն հասարակությանն ու երիտասարդ սերնդին:*

*2010 թվականից Ա. Մելքոնյանը Հայոց պատմության և մշակույթի պատմության դասախոսությունների շարք է իրականացնում Հայոց բանակում՝ նպատակ ունենալով բարձրացնել հայ զինվորականի պատմաճանաչողական և ռազմահայրենասիրական ոգին:*

*Պատմաբանն իր գիտամանկավարժական ու հասարակական ակտիվ գործունեության համար արժանացել է մի շարք բարձրագույն մրցանակների ու պարգևների: Այսպես, նրա «Էրզրում» մենագրությունը և Արևմտյան Հայաստանի գավառներին ու բնակավայրերին նվիրված շուրջ 30 հոդվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր մրցանակին (1994 թ.), իսկ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» աշխատությունը՝ Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին (2004 թ.): Նա պարգևատրվել է նաև Երևանի բժշկական համալսարանի «Ոսկե» (2006 թ.), «Ֆրիտյոֆ Նանսեն» (2010 թ.), ԵՊՀ (2011 թ.), Գարեգին Նժդեհ (2011 թ.) մեդալներով և այլն: Պատմագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Ա. Մելքոնյանը 2003 թ. պարգևատրվել է ՀՀ Նախագահի «Մովսես Խորենացի», իսկ 2005 թ.՝ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու*

*համար, ՀՀ վարչապետի մեդալներով, նաև՝ «Մանկավարժական Համալսարան» հուշամեդալով (2011 թ.):*

*«Երկրից է սկսվում էրգիրը», «Արևմտյան Հայաստանի ճամփաներով», «Հայաստան աշխարհի անմահության խորհուրդը», «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը»՝ ահա պատմագետ Ա. Մելքոնյանի մտասևեռումը: Հետազոտական, մանկավարժական ու գիտավարչական աշխատանքով ծանրաբեռնված գիտնականը բազմիցս ուխտագնացություն է կատարել Արևմտյան Հայաստան (1997, 2000, 2001, 2006, 2007, 2009, 2010 թթ.) և շրջել է մեր Հայրենիքի գյուղերով ու քաղաքներով, ուսումնասիրել պատմական տարածքները, ապա, վերադառնալով, աշխատություններով ու տեսաֆիլմերով իր տպավորությունները կիսել հայրենակիցների հետ: Նրա ուխտագնացությունների արդյունք է «Կարոտի էրգիր» (Երևան, 2006) ֆիլմը:*

*Պատմագետ Ա. Մելքոնյանը 2007 թ. օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ Սևրի դաշնագրի օրը, բարձրացել է Արարատ լեռան գագաթը, և դրա հիման վրա ստեղծել «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» գիրքը և ֆիլմը («Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2008)՝ նվիրված հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին (1809 թ.) և Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանի Արարատի գագաթը բարձրանալու 180-ամյակին (1829 թ.): Եվ բացվում են մենագրության ու սցենարի հեղինակ Աշոտ Մելքոնյանի հետևյալ իմաստալից խոսքերով. «Ամեն մի ժողովրդի կյանքում ազգային խորհրդանիշներն ունենում են իրենց ուրույն տեղը, դերն ու նշանակությունը: Դրանք հաճախ խտացնում են տվյալ ազգի նկարագիրը, մարմնավորում հայրենիքի կերպարը, իմաստավորում նրա գոյակերպը: Հայ ժողովրդի պարագայում բազմաթիվ խորհրդանիշների մեջ առանձնանում է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթ Արարատը, քանզի այն նվիրական անուն է ոչ միայն հայության, այլև ողջ քաղաքակիրթ աշխարհի, համայն մարդկության համար՝ իբրև երկիր մոլորակի վրա մարդկային կյանքի վերակերտման խորհրդանիշ:*

*Պատմական ճակատագրի բերումով Արարատ-Մասիսը ոչ միայն վեհության, անհասանելիության, կատարելության մարմնավորում է, այլև 1915 թ. հայոց Մեծ եղեռնից ու հայ ժողովրդի հայրենազրկումից հետո՝ բռնազավթված հայրենիքի և այն նորեն իր արդար զավակներին վերադարձելու համոզումի անկրկնելի խորհրդանիշ, աշխարհասփյուռ հայության միասնականության փարոս» (էջ 8):*

*Անվանի պատմաբան, պրոֆ. Ա. Մելքոնյանին մաղթում ենք հետագա նորանոր հաջողություններ, որպեսզի պատմափաստագրական մնայուն աշխատություններով նորանոր սերունդներ դաստիարակի ի շահ Հայրենիքի և ի ծառայություն Հայոց հարցի:*

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ